



«ԱՐՅԱՍ»  
ԳԻՏԱՆՏԱԶՈՏԱԿԱՆ  
ԻՆՍՏԻՏՈՒՏ



ԱՐՅԱՍԻ ԵՐԻՏԱՎԱՐԳ  
ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՄՆԱԳԵՏՆԵՐԻ  
ՄԻԱՎՈՐՈՒՄ (ԱՆԳՄՄ)



ԵՐԵՎԱՆԻ  
ՊԵՏԱԿԱՆ  
ՀԱՄԱԼՍԱՐԿ



ՄԵԴԻԱ  
ԱՍՈՑԻԱՅԻՆ



# ԳԻՏԱԿԱՆ ԱՐՅԱՍ



SCIENTIFIC  
ARTSAKH

НАУЧНЫЙ  
АРЦАХ

№ 4(7), 2020

Հիմնադիր – Founder – Учредитель:  
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ (ԵՊՀ)  
YEREVAN STATE UNIVERSITY (YSU)  
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ (ЕГУ)  
[www.y-su.am](http://www.y-su.am)

Հրատարակիչ – Publisher - Издатель:  
ԱՐՑԱԽԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄ (ԱԵԳՄՍ)  
UNION OF YOUNG SCIENTISTS AND SPECIALISTS OF ARTSAKH (UYSSA)  
ОБЪЕДИНЕНИЕ МОЛОДЫХ УЧЁНЫХ И СПЕЦИАЛИСТОВ АРЦАХА (ОМУСА)  
[www.aegmm.org](http://www.aegmm.org)

**ԳԻՏԱԿԱՆ ԱՐՑԱԽ**

**SCIENTIFIC ARTSAKH**

**НАУЧНЫЙ АРЦАХ**

**№ 4(7), 2020**

*«Գիտական Արցախ» պարբերականն ընդգրկված է Հայաստանի Հանրապետության Բարձրագույն որակավորման կոմիտեի (ՀՀ ԲՈԿ) սահմանած դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների հիմնական արդյունքների ու դրույթների հրատարակման համար ընդունելի գիտական պարբերականների ցանկում:*

*«Գիտական Արցախ» պարբերականը գտնվում է [www.elibrary.ru](http://www.elibrary.ru) կայքում:*

*The «Scientific Artsakh» journal is included in the list of scientific periodicals acceptable for publication of the main results and provisions of doctoral and candidate theses established by the Higher Attestation Committee of the Republic of Armenia (HAC RA).*

*The «Scientific Artsakh» journal is posted on [www.elibrary.ru](http://www.elibrary.ru) website.*

*Журнал «Научный Арцах» включен в список научных периодических изданий, принятых для публикации основных результатов и положений докторских и кандидатских диссертаций, установленных*

*Высшим аттестационным комитетом Республики Армения (BAK RA).*

*Журнал «Научный Арцах» размещен на сайте [www.elibrary.ru](http://www.elibrary.ru).*

«ԱՐՑԱԽ» հրատ. – «ARTSAKH» Publ. – Изд. «АРЦАХ»  
ԵՐԵՎԱՆ – YEREVAN – ЕРЕВАН  
2020

Տպագրվում է Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ

Համարը հրատարակության է երաշխավորել «Գիտական Արցախ» պարբերականի խմբագրական խորհուրդը

**Ընթացիկ համարը նվիրվում է 2020թ. սեպտեմբերի 27-ին  
աղբբեջանաթուրքական վարձկան հրոսակների սանձագերծած  
պատերազմում Արցախի Սուրբ հողի քաջարի պաշտպաններին:**

## **ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

**Նախագահ՝ Արամ ՍԻՄՈՆՅԱՆ**, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն,  
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

**Գլխավոր խմբագիր՝ Ավետիք ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

**Գլխավոր խմբագրի տեղակալ՝ Թեհմինա ՄԱՐՈՒԹՅԱՆ**, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

### **Անդամներ՝**

**Լենա ԱՄՐՅԱՆ**, պատմական գիտությունների դոկտոր (**Տառագոնա, Իսպանիա**)

**Արծրուն ԱՎԱԳՅԱՆ**, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

**Հրանտ ԱՎԱՆԵՍՅԱՆ**, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

**Դավիթ ԲԱԲԱՅԱՆ**, պատմական գիտությունների դոկտոր, դոցենտ

**Վահրամ ԲԱԼԱՅԱՆ**, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

**Խաչիկ ԳԱԼՍՅԱՆ**, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

**Զուլիետա ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ**, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

**Վլադիսլավ ԳՐՈՒԶԴԵՎ**, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Կոստրոմա, ՌԴ**)

**Գևորգ ԴԱԻԵԼՅԱՆ**, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

**Արման ԵՐԻՎԱՐՅԱՆ**, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

**Ալֆրեդ դե ՉԱՅԱՍ**, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Ժնև, Շվեյցարիա**)

**Սեյրան ՉԱԶԱՐՅԱՆ**, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

**Մարեկ ԺԵՅՄՈ**, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Օլշտին, Լեհաստան**)

**Նատալյա ԿՈՎԿԵԼ**, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ (**Միսսկ, Բելառուս**)

**Վալենտինա ԼԱՊԵՎԱ**, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Մոսկվա, ՌԴ**)

**Օտտո ԼՈՒԽՏԵՐՅԱՆՆԻՍ**, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Համբուրգ, Գերմանիա**)

**Ռուզաննա ՀԱԿՈԲՅԱՆ**, իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ

**Իրինա ՀԱՅՈՒԿ**, փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ (**Լվով, Ուկրաինա**)

**Նազիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

**Մուշեղ ՀՈՎՍԵԹՅԱՆ**, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

**Գագիկ ՂԱԶԻՆՅԱՆ**, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

**Աշոտ ՄԱՐԿՈՍՅԱՆ**, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

**Էդիկ ՄԻՆԱՅԱՆ**, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

**Կարեն ՆԵՐՍԻՍՅԱՆ**, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

**Հայկ ՍԱՐԳՍՅԱՆ**, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

**Յուրի ՍՈՒՎԱՐՅԱՆ**, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

**Մաքսիմ ՎԱՍԿՈՎ**, սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Դոնի Ռոստով, ՌԴ**)

**Գարիկ ԶԵՌՅԱՆ**, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

**Տիգրան ԶՈՂԱՐՅԱՆ**, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գիտական Արցախ, № 4(7), 2020, Երևան, «ԱՐՑԱԽ» հրատարակչություն, 2020, 280 էջ:

**«Գիտական Արցախ» պարբերականի 2020թ. 4-րդ (7-րդ) համարի տպագրության  
աջակցել է «Մեդիա ասոցիացիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը:**

*The Issue is Recommended for Publication by the Editorial Council of the «Scientific Artsakh» Journal*

*The current issue is dedicated to the brave defenders  
of the Holy land of Artsakh in the war unleashed by  
azerbaijani-turkish mercenaries on September 27, 2020.*

## **EDITORIAL COUNCIL**

**Chairman:** Aram SIMONYAN, Director of Institute for Armenian Studies of YSU, NAS RA Associate Member,  
Doctor of History, Professor

**Editor-in-Chief:** Avetik HARUTYUNYAN, Ph.D in Law, Associate Professor

**Deputy Editor-in-Chief:** Tehmina MARUTYAN, Ph.D in Philology, Associate Professor

### **Members:**

Lena ASRYAN, Doctor of History (Tarragona, Spain)  
Artsrun AVAGYAN, Doctor of Philology, Professor  
Hrant AVANESYAN, Doctor of Psychology, Professor  
David BABAYAN, Doctor of History, Associate Professor  
Vahram BALAYAN, Doctor of History, Professor  
Gevorg DANIELYAN, Doctor of Law, Professor  
Khachik GALSTYAN, Doctor of Political Sciences, Professor  
Gagik GHAZINYAN, Academician of NAS RA, Doctor of Law, Professor  
Vladislav GRUZDEV, Doctor of Law, Professor (Kostroma, Russia)  
Julieta GYULAMIRYAN, Doctor of Pedagogical Sciences, Professor  
Ruzanna HAKOBYAN, Doctor of Law, Associate Professor  
Nazik HARUTYUNYAN, Doctor of Pedagogical Sciences, Professor  
Irina HAYUK, Ph.D in Philosophy, Associate Professor (Lviv, Ukraine)  
Mushegh HOVSEPYAN, Doctor of Philology, Professor  
Garik KERYAN, Doctor of Political Sciences, Professor  
Tigran KOCHARYAN, Doctor of Political Sciences, Professor  
Natalia KOVKEL, Ph.D in Law, Associate Professor (Minsk, Belarus)  
Valentina LAPAEVA, Doctor of Law, Professor (Moscow, Russia)  
Otto LUCHTERHANDT, Doctor of Law, Professor (Hamburg, Germany)  
Ashot MARKOSYAN, Doctor of Economic Sciences, Professor  
Edik MINASYAN, Doctor of History, Professor  
Karen NERSISYAN, Ph.D in Economic Sciences, Associate Professor  
Hayk SARGSYAN, Doctor of Economic Sciences, Professor  
Yuri SUVARYAN, Academician of NAS RA, Doctor of Economic Sciences, Professor  
Maksim VASKOV, Doctor of Sociology, Professor (Rostov-on-Don, Russia)  
Arman YEGHIAZARYAN, Doctor of History, Professor  
Seyran ZAKARYAN, Doctor of Philosophy, Professor  
Alfred de ZAYAS, Doctor of Law, Professor (Geneva, Switzerland)  
Marek ZEJMO, Doctor of Political Sciences, Professor (Olsztyn, Poland)

**Scientific Artsakh, № 4(7), 2020, Yerevan, «ARTSAKH» Publishing House, 2020, 280 pages.**

*The publication of the 4<sup>th</sup> (7<sup>th</sup>) 2020 «Scientific Artsakh» journal was supported by «Media Association» LLC.*

Номер рекомендован к публикации редакционным советом журнала «Научный Арцах»

*Текущий номер посвящен отважным защитникам  
Святой земли Арцаха в войне, развязанной азербайджано-  
турецкими наемниками 27 сентября 2020 года.*

## РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ

**Председатель:** Арам СИМОНЯН, директор Института арменоведческих исследований ЕГУ, член-корреспондент НАН Республики Армения, доктор исторических наук, профессор

**Главный редактор:** Аветик АРУТЮНЯН, кандидат юридических наук, доцент

**Заместитель главного редактора:** Теймина МАРУТЯН, кандидат филологических наук, доцент

### **Члены:**

Арцрун АВАГЯН, доктор филологических наук, профессор  
Грант АВАНЕСЯН, доктор психологических наук, профессор  
Рузанна АКОПЯН, доктор юридических наук, доцент  
Назик АРУТЮНЯН, доктор педагогических наук, профессор  
Лена АСРЯН, доктор исторических наук (Таррагона, Испания)  
Давид БАБАЯН, доктор исторических наук, доцент  
Ваграм БАЛАЯН, доктор исторических наук, профессор  
Максим ВАСЬКОВ, доктор социологических наук, профессор (Ростов-на-Дону, Россия)  
Хачик ГАЛСТЯН, доктор политических наук, профессор  
Ирина ГАЮК, кандидат философских наук, доцент (Львов, Украина)  
Владислав ГРУЗДЕВ, доктор юридических наук, профессор (Кострома, Россия)  
Джюльетта ГЮЛАМИРЯН, доктор педагогических наук, профессор  
Геворг ДАНИЕЛЯН, доктор юридических наук, профессор  
Арман ЕГИАЗАРЯН, доктор исторических наук, профессор  
Марек ЖЕЙМО, доктор политических наук, профессор (Ольштын, Польша)  
Альфред де ЗАЙАС, доктор юридических наук, профессор (Женева, Швейцария)  
Сейран ЗАКАРЯН, доктор философских наук, профессор  
Гагик КАЗИНЯН, академик НАН РА, доктор юридических наук, профессор  
Гарик КЕРЯН, доктор политических наук, профессор  
Наталья КОВКЕЛЬ, кандидат юридических наук, доцент (Минск, Беларусь)  
Тигран КОЧАРЯН, доктор политических наук, профессор  
Валентина ЛАПАЕВА, доктор юридических наук, профессор (Москва, Россия)  
Отто ЛЮХТЕРХАНДТ, доктор юридических наук, профессор (Гамбург, Германия)  
Ашот МАРКОСЯН, доктор экономических наук, профессор  
Эдик МИНАСЯН, доктор исторических наук, профессор  
Карен НЕРСИСЯН, кандидат экономических наук, доцент  
Мушег ОВСЕПЯН, доктор филологических наук, профессор  
Гайк САРГСЯН, доктор экономических наук, профессор  
Юрий СУВАРЯН, академик НАН РА, доктор экономических наук, профессор

Научный Арцах, № 4(7), 2020, Ереван, Издательство «АРЦАХ», 2020, 280 страниц.

*Публикация 4(7) номера 2020 года журнала «Научный Арцах» была осуществлена при содействии ООО «Медиа ассоциация».*

**Անի Սահակյան.** Վիրտուալ կազմակերպությունների առանձնահատկությունները..... 155  
**Ani Sahakyan.** Features of Virtual Organizations  
**Ани Саакян.** Особенности виртуальных организаций

**Վահագն Տեփոյան.** Տնտեսության ամփոփ ցուցանիշների վրա ֆինանսական համակարգի ցուցիչների ազդեցությունների գործոնային վերլուծություններ..... 164  
**Vahagn Teroyan.** The Factor Analysis of the Influence of the Financial System Indicators on the Summarized Economic Indicators  
**Ваагн Тепоян.** Факторный анализ влияния показателей финансовой системы на сводные экономические показатели

**ՄԱՆԿԱԿԱՐԺՈՒԹՅՈՒՆ, PEDAGOGY, ПЕДАГОГИКА**

**Մերի Հովհաննիսյան.** Հեռավար ուսուցման առանձնահատկությունները..... 178  
**Meri Hovhannisyan.** Peculiarities of Distance Learning  
**Мери Ованнисян.** Особенности дистанционного обучения

**ԼԵԾԿԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, LINGUISTICS, ЛИНГВИСТИКА**

**Լուսինե Սողոմոնյան.** Գերմաներեն երկխոսության հոգելեզվարանական բնութագրերը..... 188  
**Lusine Soghomonyan.** The Psycholinguistic Characteristics of German Dialogues  
**Лусине Согомонян.** Психолингвистические характеристики диалогов в немецком языке

**ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, LITERATURE STUDY, ЛИТЕРАТУРОВЕДЕНИЕ**

**Անուշ Թասալյան.** Եղիշե Չարենցը և «Ստանդարտ» հանդեսի միակ համարը..... 199  
**Anush Tasalyan.** Yeghishe Charents and the Only Issue of «Standard» Magazine  
**Ануш Тасалян.** Егише Чаренц и единственный номер журнала «Стандарт»

**Արամ Խաչատրյան.** Փնացքի ու երկաթուղու ֆունկցիոնալ նշանակությունը Հրաչյա Սարիբեկյանի «Ապուլների ուղևորությունը» վեպում..... 206  
**Aram Khachatryan.** Functional Significance of the Train and Railway in the Novel «Journey of Idiots» by Hrachya Saribekyan  
**Арам Хачатрян.** Функциональное значение поезда и железной дороги в романе «Путешествие идиотов» Грачьи Сарибекяна

**Շուշան Խաչատրյան.** Մուխտար Աուեզովը և դազախական դրամատուրգիան 1920-1940-ական թթ.-ին..... 213  
**Shushan Khachatryan.** Mukhtar Aueзов and Kazakh Dramaturgy in the 1920-1940s  
**Шушан Хачатрян.** Мухтар Ауэзов и казахская драматургия в 1920-40-ых годах

**Սիրանուշ Փարսադանյան.** Պատմական դեպքերի գեղարվեստական մարմնավորումը Հովհ. Սիրոզյան Վանանդեցու «Տեսարան հանդիսացն Հայկայ, Արամայ և Արայի» պոեմում..... 223  
**Siranush Parsadanyan.** Fictional Illustration of Historical Events in «Hayk, Aram and Ara’s Scene» Poem by Hovhannes Mirzayan Vanandetsi  
**Сирануш Парсаданян.** Художественное олицетворение исторических событий в поэме «Знаменитые деяния Айка, Арама и Ара» Ованнеса Мирзаяна Ванандеци

ՀՏԴ 82.09

### ՇՈՒՇԱՆ ԽԱԶԱՏՐՅԱՆ

ՀՀ Պետական կառավարման ակադեմիայի քաղաքական կառավարման և հանրային քաղաքականության ամբիոնի դասախոս, ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի հեռակա ասպիրանտ (2013-2017թթ.)

բ. Երևան, Հայաստանի Հանրապետություն

[shush.khachatryan@gmail.com](mailto:shush.khachatryan@gmail.com)

**Հոդվածում անդրադարձել ենք հայ իրականության մեջ դեռևս չուսումնասիրված դրամատուրգիայի ձևավորման ու զարգացման հիմնական առանձնահատկություններին: Մեր խնդիրն է ուսումնասիրել և վերլուծել դրամատուրգիայի ձևավորման նախադրյալները, ինչպես նաև 1920-1940-ականներին դրա հիմնական թեմատիկ առանձնահատկությունները: Հոդվածի նպատակն է ներկայացնել 1920-1940-ականների դրամատուրգիայի վիճակը և ցույց տալ դրա զարգացման գործում Մուխթար Աուեպովի ունեցած դերն ու նշանակությունը: Հոդվածում առանձին քննության առարկա է դարձել Մուխթար Աուեպովի «Ենլիկ և Զեբեք» պիեսի ստեղծման պատմությունը՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ այն դրամատուրգիայի առաջնեկն է: Աշխատանքում օգտագործվել են ինչպես խորհրդային, այնպես էլ ժամանակակից դրամատուրգիայի և ռուս ուսումնասիրողների աշխատանքները:**

**Հոդվածում կիրառել ենք պատմահամեմատական մեթոդը:**

Հետազոտության արդյունքում հանգել ենք այն եզրակացության, որ դրամատուրգիայի ակունքներում կանգնած Մ. Աուեպովը եղել է գրականության այդ ժանրի առանցքային դեմքերից մեկը:

Վստահ ենք, որ Մ. Աուեպովի՝ որպես ստեղծագործողի ու գրականագետի աշխատանքների հետագա ուսումնասիրությունը իր ուրույն տեղը կարող է ունենալ դրամատուրգիայի և ուսումնասիրությունների բնագավառում:

**Հիմնաբառեր՝** դրամատուրգիա, դրամատուրգիայի ձևավորում, դրամատուրգիա, դրամատուրգիայի ձևավորում, Մուխթար Աուեպով, գրականագիտություն, տեսական հարցերի քննություն, հայ-դրամատուրգիայի գրական կապեր:

**Ղապախական դրամատուրգիայի ծնունդը. զարգացման նախադրյալները:** 19-րդ դարի վերջը և 20-րդ դարի սկիզբը կարելի է համարել Ղապախ գրականության համար ամենակարևոր շրջանը. սա զարգացման այն շրջանն էր, որի հետ է կապվում գրավոր գրականության և արձակի ձևավորումն ու զարգացումը, զարգացման մի շրջան, որն աչքի էր ընկնում նախկինում հավաքված բանավոր գրականության հսկա պաշարի ուսումնասիրմամբ ու մշակումներով, գրական նոր ուղղությունների, ժանրերի, թեմատիկաների մշակմամբ ու զարգացմամբ, նոր կերպարների ստեղծմամբ: Ինչպես հայտնի է, Ղապախ գրականությունը երկար ժամանակ զարգացել է ժողովրդական բանահյուսության շրջանակներում՝ սերնդեսերունդ փոխանցվելով բանավոր ճանապարհով: Այս գրականության ամենամեծ առանձնահատկությունը ժրջառուների և

\* Հոդվածը ներկայացվել է 11.09.2020թ., գրախոսվել՝ 03.10.2020թ., տպագրության ընդունվել՝ 22.12.2020թ.:

ակինների<sup>497</sup> արվեստն էր: Մասնագիտական գրականության մեջ նույնիսկ 15-18-րդ դդ. համարվում է ժրճաունների պոեզիայի ժամանակաշրջան<sup>498</sup>: Իսկ գրականությունն իր այսօրվա տեսքով ձևավորվել է 19-րդ դարի կեսերից սկսած միայն: Ինչպես արդարացիորեն նշում է ղազախ գրականագետ Մուխամեդժան Կարատանը՝ «Ղազախ գրականությունը խորհրդային միությունում ամենաերիտասարդներից մեկն է»<sup>499</sup>:

Քանի որ պատմական իրադարձություններն ուղղակիորեն և անուղղակիորեն իրենց ազդեցությունն են ունենում գրականության զարգացման օրինաչափությունների վրա, հետևաբար, 20-րդ դարասկզբին ղազախ ժողովրդի կյանքի պատմական փոփոխություններն<sup>500</sup> էապես փոխում են նաև այդ շրջանի ղազախ գրականության խնդիրներն ու բովանդակությունը: Գրականության նախկին շրջանին բնորոշ չափածոն և՛ թեմատիկայով, և՛ կերպարներով, և՛ լեզվով ի վիճակի չէր ամբողջությամբ հարմարվել նոր հասարակական-քաղաքական իրավիճակին և սկսել էր աստիճանաբար դիրքերը զիջել արձակին: Արձակի ժանրերն ավելի ճկուն էին, ինչը հնարավորություն էր տալիս ստեղծագործողներին զեղարվեստականորեն արծարծելու այնպիսի թեմաներ, որոնք չափածո խոսքով հնարավոր չէր, կամ արծարծելու դեպքում ստեղծագործությունը էապես տուժում էր:

Այսպիսի պայմաններում զեղարվեստական գրականության զարգացմանը զուգահեռ 1920-ականներին ձևավորվում էր գրական նոր ժանրը՝ դրամատուրգիան: Այն զարգացման հատկապես բեղմնավոր շրջան է ապրում 1930-ականներին: Մեկը մյուսի հետևից ասպարեզ են գալիս նոր դրամատուրգներ, գրվում են նոր պիեսներ, աշխուժանում է նոր ձևավորվող ղազախական թատերական կյանքը: Ղազախական թատրոնի ու դրամատուրգիայի զարգացման արագ տեմպերն ունեին մի քանի պատճառներ: Նախ՝ 20-րդ դարասկզբին ղազախ ստեղծագործողները զեղարվեստական փնտրտուքների մեջ էին. գրականության զարգացման ժամանակակից փուլի օրինաչափություններին համընթաց՝ նրանք փնտրում էին գաղափարական ասելիքն ընթերցողին հասցնելու նոր ճանապարհներ, որոնցից մեկն էլ դրամատուրգիան էր: Այստեղ ևս, ինչպես արձակում առհասարակ, որպես լավագույն օրինակ էր ծառայում ռուս գրականությունը: Հետևելով ռուս գրականության ավանդույթներին, ինչպես նաև հարաբերվելով խորհրդային մյուս հանրապետությունների ու ժողովուրդների գրականության առանձին նմուշներին՝ ղազախ ստեղծագործողները փորձում էին ստեղծել, յուրացնել այլ՝ մինչ այդ իրենց գրականությանն անհայտ ժանրեր ու թեմատիկաներ: Ավելին՝ դրամատուրգիայի զարգացումն իր հետ բերում էր թատերական կյանքի աշխուժացում, նոր խաղացանկերի կազմում: Նշենք, որ ղազախական թատրոնի ձևավորման վրա մեծ ազդեցություն էին թողնում ռուսական քաղաքային թատրոնները, որոնք արդեն 19-րդ դարի կեսից գործում էին երկրի տարածքում: Նմանատիպ թատրոններ գործում էին մասնավորապես Ուրալսկ

<sup>497</sup> Ակինները չափածո ստեղծագործությունների (բանաստեղծություն, ժրճ, դաստան, պոեմ) բանավոր կատարողներն են, որոնք իրենց կատարումները ուղեկցում են երաժշտական գործիքի՝ դոմբրայի կամ կոբզիի հետ: Ժրճաունները ևս ժողովրդական պոեզիայի կատարողներ են, որոնք ունենին նաև այս կամ այն թեմային վերաբերող հանպատրաստից փոքրիկ երգեր՝ ժրճեր, հորինելու ձիրք:

<sup>498</sup> **Өбдіғазылы Б.**, Қазақ әдебиеті: Энциклопедиялық анықтамалық, Алматы, «Аруна», 2010, էջ 576

<sup>499</sup> **Каратаев М.** Казахская литература. Сборник статей, Москва, Госкитиздат, 1960, С. 164

<sup>500</sup> 19-րդ դարավերջին և 20-րդ դարասկզբին ղազախ ժողովուրդն ապրում էր պատմական իրադարձություններ. քայքայվում էին նախկին ֆեոդալական կարգերը, որոնց փոխարինելու էին գալիս նոր հասարակական հարաբերություններ, տափաստանում աստիճանաբար տարածվում էր հեղափոխական այլքը: 1919թ.-ին Ղազախստանում հաստատվում են խորհրդային կարգերը՝ բերելով նոր հասարակական հարաբերություններ ու մշակույթ:



(1860թ.-ից), Օրենբուրգ (1869թ.-ից) քաղաքներում, ինչպես նաև երկրին մշակութային կապերով ամուր կապված Օմսկ քաղաքում (1865թ.-ից), որտեղ խաղացանկը ներառում էր ինչպես ռուս, այնպես էլ եվրոպական դրամատուրգների ստեղծագործություններ:<sup>501</sup> Բնականաբար, դրամատուրգիայի ձևավորվմանը զուգահեռ հասունանում էր նաև դազախական պրոֆեսիոնալ թատրոնի ստեղծման պահը: Առավելապես ռուսական թատրոնի ազդեցությամբ 1925թ.-ին այն ժամանակվա Ղազախական ԻԽՍՀ մայրաքաղաք Զըզըլ-Օրդայում հիմնվում է առաջին դազախական թատրոնը, սակայն թատրոնի պաշտոնական բացումը լինում է մեկ տարի անց՝ 1926թ.-ին, ժամանակակից դրամատուրգ, գրականագետ, հասարակական գործիչ Կեմենզերով Կոչմուհամմեդի (1896-1937) «Алтын сакина» («Ոսկե օղակ») պիեսով<sup>502</sup>:

Դրամատուրգիայի, հետևաբար նաև թատերական արվեստի զարգացմանը մեծապես նպաստում էին նաև դազախ ժողովրդի բանահյուսության առանձնահատկությունները: Կարելի է փաստել, որ ժողովրդական բանահյուսությունը, որը գրավոր գրականության սկզբնաղբյուրներից էր, պարարտ հող էր ստեղծել նաև դրամատուրգիայի արագ զարգացման համար: Խոսքը մասնավորապես ժողովրդի շրջանում տարածված ժողովրդական խաղիկների, ժառ-ժառերի՝ երկու սիրեցյալների սիրային երգերի, հարսանեկան խաղիկ-երգերի՝ բետաշարի, սընսուի, ինչպես նաև հանպատրաստից երգվող, կոնկրետ դեպքին վերաբերող փոքրիկ բանաստեղծությունների՝ այստղաների մասին է: Պատահական չէ, որ ժողովրդական բանահյուսության առանձին նմուշների և մասնավորապես այտըսի, բետ-աշարի, խաղ-երգերի, սընսուի և նմանօրինակ երգերի դերը բարձր է գնահատել դրամատուրգիայի ակունքներում կանգնած Մուխթար Աուեզովը (1897-1961): Հոգվածներից մեկում նա նշում է, որ այս խաղիկներն այնքան հղկված են, որ «դրանք այսօր բեմ բարձրացնելու համար որևէ բան ավելացնելու կարիք անգամ չկա»:<sup>503</sup> Մեկ այլ՝ 1926թ.-ին գրած «Жалпы театр өнері мен казак театры» («Թատերական կյանքն ու դազախական թատրոնը») հոդվածում Աուեզովը նշում է. «Եթե վերցնենք մեր ժողովրդի օրինակը, ապա պետք է ասել, որ այն (դրամատուրգիան՝ Շ.Խ.) սնվում է ժողովրդական ավանդույթներից, սովորույթներից, երգացանկից, ժրռերից: Իսկապես, թատերական կյանքի ձևավորման համար պարարտ հող և դրական պայմաններ է ստեղծել ժողովրդական բանահյուսությունը»:<sup>504</sup> Ավելին՝ Մուխթար Աուեզովը հետագայում իր պիեսներում մեծապես օգտագործում է ժողովրդական բանահյուսության այս տարրերը՝ մասնավորապես կերպարների մենախոսությունների, երկխոսությունների ժամանակ:

1920-ականների վերջին և հատկապես 1930-ականներին դրամատուրգիայի զարգացման ներքին օրինաչափություններից ոչ պակաս կարևոր ազդակ էր պետական քաղաքականությունը ներքին՝ մասնավորապես մշակույթի հարցերում: Մշակույթի, գրականության զարգացման հարցերի քննարկումն ու պետական վերահսկողությունը դրանց «հավուր պատշաճի» կատարման նկատմամբ վերահսկողությունը ընդունված երևույթ էր այդ ժամանակների համար: Հայտնի է, որ 1920-ականներից սկսած՝ դրամատուրգիան և, առհասարակ, թատերական կյանքի զարգացումը եղել է նաև տեղական իշխանությունների ուշադրության կենտրոնում, ինչի մասին փաստում են արխիվային կյութերը: Այսպես՝ 1920թ.-ի հոկտեմբերի 4-12-ը Օրենբուրգում տեղի ունեցած Ղազախստանի ԽՍԻՀ սովետների ժողովում, ինչպես նաև 1925թ.-ի ապրիլին

<sup>501</sup> Кундакбайұлы Б., Театр туралы толғаныстар, Алматы, «Өнер», 2006, С. 11-12.

<sup>502</sup> Նշենք նաև, որ մինչև թատրոնի պաշտոնական բացումը՝ 1925թ.-ի հունվարի 13-ը, դազախական պրոֆեսիոնալ թատրոնի բեմում առաջին բեմադրությունը, որը խաղացվել էր, Մ. Աուեզովի «Եսիկ և Զեբեք» պիեսի հատվածներից մեկն էր:

<sup>503</sup> Әуезов М., Шығармалар, 11-том, Алматы, Жазушы, 1969, 53-бет

<sup>504</sup> Қазақ әдебиеттану ғылымының тарихы/ Жауапшы редактор А.С.Ісімакова, 2-томдық, 1-том, Алматы, ҚазАқпарат, 2008, С. 161.

Զրզրթորդայում անցկացվող *Ղապախական* սովետների 5-րդ նստաշրջանում, ի թիվս այլ հարցերի, քննարկվում էր նաև դրամատուրգիայի և թատերական կյանքի զարգացման հարցը<sup>505</sup>: Կամ, օրինակ, 1936թ.-ին խորհրդային գրողների միության նախագահների ժողովին, ի թիվս այլ մշակութային հարցերի, քննարկվում էր նաև *կոլխոպա-սովետական* թատրոնների համար խաղացանկի ստեղծումը: Ավելին՝ ժողովի ընթացքում մասնակից ստեղծագործողներից շատերը (Մ. Աուեզով, Ս. Մայլին, Գ. Մուսրեպով և այլք) պետության պատվերով պարտավորվում էին «մինչև 1936թ. մայիսի 1-ը գրել և քննարկման ներկայացնել մեկական պիես այս (կոլխոպի՝ Շ.Խ.) թեմատիկայով»<sup>506</sup>:

Այսպիսով՝ 1920-ականներին դեռևս նոր ձևավորվող դազախական դրամատուրգիան բռնել էր արագ զարգացման ուղին: Դրա զարգացման համար կային մի քանի նախադրյալներ. մեկը ռուս գրականության ազդեցությունն էր, երբ վերջինիս օրինակով դազախ ստեղծագործողները կարողանում են արագ ըմբռնել նոր ժանրի հիմնական ուղղությունները: Բացի այդ, դազախ ժողովրդի բանահյուսության առանձին նմուշները (ժողովրդական խաղիկները, երգերը և այլն) էապես նպաստում են ժանրի զարգացմանը: Յեղիակները ժողովրդի շրջանում տարածված երգերը, խաղիկները մշակում, օգտագործում են ստեղծագործություններում և բեմ են բարձրացնում՝ դրանով ապահովելով այս կամ այն պիեսի հաջողությունը: Բացի այդ, խորհրդային իշխանություններն իրենց ուշադրության կենտրոնում էին պահում դազախ ժողովրդի մշակութային քաղաքականության հարցը և մեծապես կարևորում էին դրամատուրգիան:

**Դրամատուրգիայի հիմնական թեմաները:** Ինչպես առհասարակ արձակի դեպքում, 1920-30-ականներին դրամատուրգիայում ևս արծարծվող թեմաները տարբեր էին՝ բարոյականությունից մինչև մարդկային արատների ծաղրանք, ժողովրդի հերոսական պայքարից մինչև ժամանակակից կյանք: Այս մասին կարևոր ենք համարում նաև Մ. Աուեզովի դիտարկումը: 1954թ.-ին Ղազախ գրողների 5-րդ նստաշրջանին խոսելով վերջին տարիներին գրված պիեսների թեմատիկ առանձնահատկությունների մասին՝ նա նշում է. «Այդ շրջանի պիեսները թեմատիկ առումով եթե դասակարգենք, ապա կունենանք երեք հիմնական խումբ: Առաջին խումբը վերաբերում է այն ստեղծագործություններին, որոնք կապված են ազգային էպոսների, ֆոլկլորի և անհատների հետ, ինչպես, օրինակ, «Կոզի-Կորպեշ և Բայան-Սուլու», «Ալդար-Ջյոսե», «Ալթընսարին», «Չոբան Կելիխանով» ողբերգությունը, «Մայրա», «Ժամարտի գորգը» պիեսները: Երկրորդ խումբը պիեսներն են, որոնք նվիրված են պատմությանն ու հեղափոխությանը, օրինակ այն պիեսները, որոնք գրված են Ամանգելի Իմանովի գլխավորած ապստամբության թեմայով: Օրինակ՝ «Ամանգելի», «Տափաստանային հրացուլը»: Երրորդը խորհրդային թեմայով գրված պիեսներն են»<sup>507</sup>:

Աուեզովյան այս դասակարգման հետ դժվար է չհամաձայնվելը: Լավագույնս հասկանալով դրամատուրգիայի առանձնահատկությունները՝ Մ. Աուեզովը հրաշալի հասկանում էր գրականության այդ ժանրի զարգացման տրամաբանությունն ու տեսական հարցերի քննարկման ժամանակ հանդես էր գալիս որպես փորձառու գրականագետ: Նրա այդ դասակարգման հիմքում ստեղծագործությունների ընդհանուր թեմատիկ բաժանումն է, որին հավատարիմ կմնանք նաև մենք: Բայց այդ շրջանում դրամատուրգիայում հանդիպում են նաև այլ թեմաներով գրված ստեղծագործություններ, որոնք աուեզովյան դասակարգումից դուրս են մնացել. դրանց ընդհանուր գծերով կանդրադառնանք ստորև:

<sup>505</sup> Նույն տեղում, էջ 159:

<sup>506</sup> Неизвестное в наследии М. Ауэзова/ Отв. ред. С. Абдулло, Библиотека Олжаса, 2013, С. 62-63.

<sup>507</sup> **Әуезов М.**, Шығармаларының елу томдық толық жинағы 32-том, Алматы, Дәуір, Жібек-Жолы, 2004, С. 30-31.

Արտագրվելով ժամանակի տրամադրությունները, քննարկելով հասարակությանը մտահոգող տարատեսակ հարցեր՝ դրամատուրգիան թեմատիկ առումով հանդես է գալիս երկրում տեղի ունեցող հասարակական-քաղաքական փոփոխությունների հետ ներդաշնակ կապի մեջ: Այսպես՝ 1920-ականներին՝ հետհեղափոխական շրջանում, երբ դազախ ժողովուրդը վերագնահատում էր իր անցյալը, պատմական ուղին, տարածված էր պատմական թեման. դրամատուրգները հաճախ էին անդրադառնում պատմական այս կամ այն իրադարձությանը, այս կամ այն պատմական անձին: Օրինակ՝ Ս. Մուկանովի «Պայթարի օրերին», Մ. Ախինժանովի «Իսատայ-Մախամբետ» պիեսների թեման 19-րդ դարի երկրորդ կեսին Բուկեկյան հորդայի դազախների ապստամբությունն էր: Նույն թեմայով է գրված նաև Ժ. Այմաուլտովի «Կանաայան և Շերբանուն», Բ. Մայիլի «Մեր յիգիթները» պիեսները: Ժամանակակից հայտնի գրաքննադատ, թատերագետ Բ. Կուանդակբայուլդի դիտարկմամբ՝ արդեն 1940-1950-ականներին պատմական թեմատիկայում առանձին մաս են կազմում ստեղծագործությունները, որոնք վերաբերում են բացառապես կոնկրետ պատմական անձերին՝ ներառելով կենսագրական ստույգ տվյալներ: Այսպիսի «պատմա-կենսագրական» թեմայով ստեղծագործություն է, օրինակ, Մ. Աուեզովի և Լ. Սորոյովի՝ Աբայ Կուանբակի կյանքի վերջին դրվագը պատկերող «Աբայ» ողբերգությունը, Գ. Մուսրեպովի «Ական Սերին և Ակտոկտընը» ողբերգությունը՝ նվիրված 19-րդ դարի հայտնի ակին Ական Սերե Կորամասուլդին, Ս. Մուկանովի «Չոկան Վելիխանով», Մ. Ակինժանովի «Իբրահիմ Ալթընսարին», Ի. Ջանսուգուրովի և Կ. Մուկաշևի «Տափաստանի երգը», 2. Ակիշևի «Ժայաու Մուսա», Շ. Յուսեյինովի «Ղանի Մուրատբան» պիեսները և այլն:<sup>508</sup>

1930-ականներին, երբ երկիրը թևակոխում է սոցիալիզմի կառուցման բուռն շրջան, ստեղծագործողները որպես թեմա են ընտրում կոլխոզային կյանքը՝ նկարագրելով այն դրական գույներով, գովերգելով ազնիվ աշխատանքն ու լուսավորությունը: Այս թեմայով առավել հայտնի են Մ. Աուեզովի, Գ. Մուսրեպովի, Ս. Սեյֆուլինի և այլոց ստեղծագործությունները:

Հայրենական մեծ պատերազմն իր հերթին բերում է թեմաների նոր շրթա՝ պատերազմի, ռազմաճակատի թեման՝ հայրենասիրական շեշտադրումներով: Ինչպես արձակի այլ ժանրերում<sup>509</sup>, դրամատուրգիայում ևս հետպատերազմյան շրջանում տարածված էր մարդկային բարոյականությանը վերաբերող թեման՝ մարդկային թերությունների ու թուլությունների, կենցաղային հարցերի ու սոցիալական դժվարությունների շեշտադրումներով (օրինակ՝ Ա. Աբիշևի «Նախանձ», «Ո՞վ է իմ հայրը», Ն. Անովի և Յ. Շտեյնի «Սրտի կամոք», Շ. Յուսեյինովի «Իրտիշի ափին» պիեսները): Այս պիեսների կերպարները ապրում են հետպատերազմական երկրում, որտեղ բարոյականության ընկալումները, մարդկային վեհ բարոյական կերպարը ենթարկվել էին փոփոխության. ամուսնուն կորցրած միայնակ կանայք, պատերազմ գնացած և այլևս չվերադարձած հորը փնտրող զավակներ, պատերազմի հետևանքով որդեկորույս մայրեր, կերակրող հորը կորցրած 7 օրվա հոգսը հազիվ հոգացող ընտանիքներ...

Յեղիականների կողմից պիեսների թեմաների ընտրությունը պայմանավորված էր ոչ միայն երկրի արտաքին, այլ նաև ներքին հարցերում պետական քաղաքականության հետ: Այսպես՝ շնորհիվ եղբայրական գրականության, որն ակտիվորեն քարոզվում էր հատկապես հետպատերազմյան տարիներին, դազախ դրամատուրգիան հարստանում է նոր թեմաներով:

Հետպատերազմյան շրջանում ոչ միայն Ղազախական ԽՍՀ-ում, այլ նաև մյուս խորհրդային հանրապետություններում գրողները ջանում են ցուցադրել հայրենիքի

<sup>508</sup> Кундакбайұлы Б., Театр туралы толғаныстар, Алматы, Өнер, 2006, С. 37.

<sup>509</sup> Այս մասին մանրամասն տե՛ս Ахметов З. Современное развитие и традиции казахской литературы, Алма-Ата, Наука, 1987, С. 220.

համար պայթարող, հայրենասեր մարդկանց կյանքը, որոնք աշխատում են կոլխոզներում և նվիրված են ազնիվ աշխատանքին: Կարելի է փաստել, որ հատկապես հետպատերազմյան շրջանում վերը թվարկված թեմաներից ամենաշատ արծարծվող թեման ժամանակակից կյանքն է: Այս ստեղծագործություններում հեղինակները ներկայացնում են ժամանակակից մարդուն, կոլխոզի առօրյան, կյանքը, ապրումները: Հատկապես հետպատերազմյան շրջանում դրամատուրգներն անդրադառնում են նաև խորհրդային միջավայրում ապրող մտավորականության թեմային: Ընդ որում, հեղինակները ներկայացնում էին փայլուն կրթություն ստացած, ազգային հոգսերով ապրող անհատներին, որոնք նվիրվել են կոմունիզմի կառուցմանը որպես մտավորականության ներկայացուցիչներ (օրինակ՝ Մ. Իմանժանովի «Իմ սեր», Ա. Աբիշևի «Հոր դատը», Շ. Հունեյինովի «Շատախոսը», «Երեկ և այսօր» պիեսները)<sup>510</sup>: 1940-ականների կեսերից դազախ գրականության մեջ թվով բավական քիչ, սակայն հայտնվում են նաև պիեսներ՝ գրված այսպես կոչված միջազգային թեմայով: Օրինակ՝ Ռ. Ռայիմկուլովի և Կ. Իսաբաևի «Ատելության ուժը» պիեսի գործողությունները զարգանում են հետպատերազմյան շրջանի Գերմանիայում և պատմում են խորհրդային Միության գերիների կրած անմարդկային չարչարանքների մասին:

**Մուխթար Աուեզովի ներդրումը դազախական դրամատուրգիայի պարզացման գործում:** Ղազախ դրամատուրգիայի ձևավորման ու զարգացման գործում անզերազանցելի է Մուխթար Աուեզովի դերը: Ինչպես խորհրդային շրջանում, այնպես էլ այսօր դազախ գրականագետները դազախական դրամատուրգիայի առաջին ծնունդը համարում էին նրա «Ենիկ և Զեբեք» պիեսը՝ գրված 1917թ.-ին:<sup>511</sup> Այս պիեսը հետագայում՝ 1925թ.-ի հունվարի 13-ին, բեմադրվում է արդեն պրոֆեսիոնալ, կազմավորված թատրոնում՝ մինչև դրա պաշտոնական բացման արարողությունը (1926թ.):<sup>512</sup>

Ավելին՝ հենց այս պիեսով է սկսվում Մուխթար Աուեզովի ստեղծագործական կյանքը, հետևաբար այն սկզբունքային կարևորություն ունի ոչ միայն հեղինակի, այլ նաև առհասարակ դազախական դրամատուրգիայի համար: «Ենիկ և Զեբեք» պիեսի սյուժեի հիմքում 18-րդ դարի 80-ականներին Աուեզովի ծննդավայրում Շընղըստաու կոչվող տարածքում, դազախների շրջանում երկու թշնամի թոբըկթը և նայման ցեղերի երիտասարդների ողբերգական սիրո պատմությունն է:

Ինչպես արդեն նշեցինք, պիեսն առաջին անգամ բեմադրվում է 1917թ.-ին հեղինակի մասնակցությամբ մեծագույն դազախ լուսավորիչ Աբայ Կունանբաևի (1845-1904) թոռնուհիներից մեկի հարսանիքի ժամանակ: Հարսանիքին մասնակցում էր նաև Աբայ Կունանբաևի կինը՝ Այգեմիրը: Այս մասին հայտնի գրականագետ Ե. Լիզունովան գրում է. «Այս ժամանակ արդեն դազախական տափաստանում ստեղծվել էին երիտասարդական ակումբներ: Աուեզովի երիտասարդները մասնակցում էին ակումբային կյանքին: Եվ պատահական չէ, որ ռուսական դպրոցում կրթություն ստացած Մուխթարը որոշում է յուրօրինակ նվեր անել ամուսնացողներին: Յոթ օրվա ընթացքում նա գրում է մի պիես, որի հիմքում ժողովրդական պատմությունն էր երկու սիրահարների՝ Ենիկի և Զեբեքի մասին: Բայց աղջիկները հրաժարվում են խաղալ Ենիկի կերպարը, և սիրահար աղջկա կերպարը ստիպված է լինում մարմնավորել յիգիթ Աիմեդը: Մասնակցող երիտասարդները գրել-կարդալ չգիտեին, որ իրենց դերերն անգիր անեին, և հեղինակը դառնում է նաև հուշարար: Թաքնվելով բեմի մի հատվածում՝ նա հուշում էր «դերասաններին»: Բայց երիտասարդ աղջիկները, նկատելով թաքնված հուշարարին, սկսում են նրա խոսքերը փոփոխելով՝ շեղել բեմի վրա գտնվող երիտասարդներին:

<sup>510</sup> Նույն տեղում, էջ 309:

<sup>511</sup> **Ахметов З., Лизунова Е.** Художественное Мастерство М. Ауэзова, Классические исследование: мономонник, 18 том, Алматы, Эдебиет Элемі, 2013, С. 385.

<sup>512</sup> **Қабдол З.,** Әуэзов туралы, Алматы, Санат, 1997, С. 235.

Արդյունքում «դերասանները» դիմում են իմպրովիզի՝ հորինելով համապատասխան այտուները:<sup>513</sup> Այս անսովոր դեպքն այնքան մեծ իրարանցում էր առաջացրել ժամանակին, որ դրա մասին գրվել էր նաև «Сарыарка» թերթում<sup>514</sup>: Իր կյանքի ընթացքում հեղինակը մի քանի անգամ փոփոխության է ենթարկում պիեսը՝ այն հասցնելով կատարելության:<sup>515</sup>

Մ. Աուեզովը հեղինակել է ավելի քան երեք տասնյակ ողբերգություններ, կատակերգություններ, ազգային դրամաներ, կինոդրամաներ, լիբրետո օպերայի և բալետի համար, այդ թվում՝ կինոդրամա («Ռայխան», 1935թ., «Համառ ցեղը» 1947թ., «Աբայ» 1944թ., «Կնոջ ուղին», 1952), օպերային լիբրետո («Աբայ» 1943, «Հինգ ընկեր», «Տուլեգեն Տոխտարով», 1947, վերջին խմբ. 1952-1960), բանաստեղծություններով զրված պիես («Բեկետ» 1939թ.), լիբրետո («Ական Չահրա», 1935թ.): Որոշ ստեղծագործություններ էլ գրում է համահեղինակությամբ, ինչպես, օրինակ, Ա. Թափբաևի հետ գրում է «Սպիտակ կեչի» (1938թ.), Ս. Սորբուկի հետ՝ «Աբայ» (1939թ.), Ա. Աբիշեվի հետ՝ «Պատվո գվարդիա» (1942թ.), Գ. Մուսրեպովի հետ՝ «Մերկացված սուրը» (1945թ.) պիեսները:

Կանգած լինելով դրամատուրգիայի ակունքներում՝ Մ. Աուեզովը բազմիցս անդրադարձել է նաև դրամատուրգիայի զարգացման տեսական հարցերի քննարկմանը, հեղինակել է մի շարք հոդվածներ՝ կապված դրա զարգացման հետագա ուղու հետ, հանդես է եկել զեկույցներով ոչ միայն դրամատուրգիայի, այլ նաև թատրոնի ու կինոյի վերաբերյալ մասնավորապես «Қызыл сұңқалар» (1922), «Жалпы өнері мен қазақ театры» (1926), «Қазақстан мемлекет театры» (1928), «Казахская драматургия» (1933), «Жақсы драматургия- сапалы әдебиет белгісі» (1934), «Қазақстан көркем өнері» (1935), «Қазақ сахнасындағы аударма пьесалар» (1937), «Дінді әшкерелейтін пьеса» (1938)<sup>516</sup>, «Литература и кино» (1944), «Драматургияның заңы туралы кейбір ойлар» (1953թ.) հոդվածներում, ինչպես նաև «Қазақстан мемлекеттік театрының және жылдығы және алдағы міндеттері» (1932թ.), «Драматургияның бүгінгі жайы мен алдағы міндеттері» (1934թ.), «Реалистік драма жолында» (1954թ.) զեկույցներում նա անդրադառնում է դրամատուրգիայի տեսական հարցերին, դրա հետագա զարգացման պատմական նախադրյալներին, ինչպես նաև ժամանակակից վիճակին, կերպարներին վերաբերող հարցերին: Աուեզովը մեծապես կարևորում էր դրամատուրգիայի դերը ժամանակակից գրականության մեջ, և դա է պատճառը, որ դրամատուրգիայի տեսական հարցերի քննությամբ նա զբաղվում է ամբողջ կյանքի ընթացքում:

Անդրադառնալով դրամատուրգիայի ժամանակակից վիճակին՝ «Реалистік драма жолында» հոդվածում հեղինակը նշում է. «Դրամատուրգիան խորհրդային գրականության ամենահիմնական և կարևորագույն ոլորտներից մեկն է: Դրա հոգևոր հիմքը, հիմնաքարը խորհրդային հայրենասիրությունն է, բարձր գաղափարախոսությունը և կյանքի ճշմարտությունը»<sup>517</sup>: «Դրամատուրգիան գրականության ամենադժվար, ամենապատասխանատու և դրանով հանդերձ ամենահաջող յուրացվող, ամենամասսայական ժանրն է: Դրա համար է, որ հենց այստեղ դազախ գրականությունն ունի ամենամեծ

<sup>513</sup> Лизунова Е., Дюсенбаев И. Мухтар Ауэзов к 60-летию, КазГосИзд Худ. Лит., Алма-Ата, 1952, С. 9.

<sup>514</sup> Әуезов М. /Энциклопедия/ Бас ред. Қасқабасов С., Алматы, Атамұра, 2011, С. 251.

<sup>515</sup> Մ. Աուեզովի մշակմամբ «Ենիկ և Քերեք» պիեսը մինչև այսօր դազախական թատրոնների խողացանկի անբաժանելի մասն է կազմում:

<sup>516</sup> Әуезов М., Шығармаларының елу томдық толық жинағы, 13-том, Алматы, Дәуір, Жібек-Жолы, 2004, С. 386.

<sup>517</sup> Әуезов, М., Шығармаларының елу томдық толық жинағы, 32-том, Алматы, Дәуір, Жібек-Жолы, 2004, С. 27-63.

թերացումները»<sup>518</sup>: Իսկ որո՞նք էին դրամատուրգիայի ղեկավարությունները ըստ Նրա. «Գրական մյուս ժանրերի հետ համեմատելիս դրամատուրգիայի առանձնահատկությունն այն է, որ այն պատկերում է բացառապես մարդուն: Իսկ եթե այդպես է, ուրեմն պիեսի կերպարները պետք է լինեն դիպուկ: Յուրաքանչյուր պիես պետք է հնարավորության սահմաններում տա մեկ-երկու կերպար, որը կտպավորվի հանդիսատեսի հիշողության մեջ»<sup>519</sup>: Այսինքն՝ Նա առաջ էր քաշում կերպարին բազմակողմանիորեն, տարբեր իրավիճակներում պատկերելու անհրաժեշտությունը: Մյուս կողմից Նա բարձրացնում էր սյուժեում կոնֆլիկտի սկզբունքային կարևորության հարցը: Ավելին՝ խոսելով պիեսների գաղափարական ասելիքի մասին՝ Նա կոնֆլիկտը դիտարկում էր գաղափարական ասելիքի հետ ներդաշնակ կապի մեջ: «Դրամայի գաղափարական ասելիքը կերպարի պայթարն է ինքն իր դեմ», - նշում է Նա: «Драматургияны бугинги жайы мен алдағы міндеттері» հոդվածում Աուեզովը նշում է, որ ժամանակակից դրամատուրգիայի քաղաքական ենթաշերտերը թաքնված են ստեղծագործության թեմայի, գաղափարական ասելիքի, կերպարների ու սյուժեի մեջ:

Դրամատուրգիայի զարգացման գործում Աուեզովի ներդրումը մեծ է Նաև որպես թարգմանչի, ընդ որում, բացի խորհրդային և եվրոպական գրականության առանձին հեղինակների աշխատանքները դազախերեն թարգմանելուց (օրինակ՝ Ն. Գոգոլի «Ռեվիզորը», Վ. Շեքսպիրի «Օթելլոն» և «Անսանձ կնոջ սանձահարումը», Ա. Կրոնի «Նավատորմի սպան», Ա. Աֆինոգենովի «Վախ», Ն. Պոգոդինի «Արիստոկրատները» ստեղծագործությունները), Նա ռուսերեն է թարգմանել Նաև իր և դազախ այլ ստեղծագործողների մի քանի պիեսները (օրինակ՝ Ի. Ժանսուգուրովի «Պողպատե ուղին», իր պիեսներից՝ «Ելիկ և Քեբեք», «Պայթար», «Պատվո գվարդիա» ստեղծագործությունները):

**Ամփոփում:** Կարելի է վստահաբար փաստել, որ 20-րդ դարասկիզբը դազախ գրականության համար Նոր շրջափուլի սկիզբ էր: Գրականությունը հարստանում էր Նոր թեմաներով, Նոր ժանրերով ու կերպարներով: Ղազախական դրամատուրգիայի ծնունդն ազդարարվում է 1917թ.-ին Մուխթար Աուեզովի «Ելիկ-Քեբեք» պիեսով, որը դառնում է Նոր կազմավորված դազախական պրոֆեսիոնալ թատրոնի խաղացանկի առաջին ներկայացումը: Ղազախ դրամատուրգիայում անգերազանցելի է Մուխթար Աուեզովի դերն ու վաստակը: Նա հեղինակել է մոտ երեք տասնյակ պիեսներ, ինչպես Նաև զբաղվել դրամատուրգիայի տեսական հարցերի քննությամբ: Շնորհիվ Նաև Նրա աշխատանքների՝ Նոր ձևավորվող դրամատուրգիան շատ արագ կարողանում է իր տեղը հաստատել գրականության մեջ և զարգացման կարճ ժամանակահատվածում ընդգրկել թեմատիկ լայն շրջանակներ: Հանդես գալով երկրի քաղաքական ու սոցիալական հարցերի հետ ներդաշնակ կապի մեջ՝ դրամատուրգիան արտացոլում էր ժամանակի տրամադրությունները. այսպես՝ 1920-ականներին՝ հետհեղափոխական շրջանում, տարածված էր պատմական թեման, 1930-ականներին, երբ երկիրը լծվել էր կոմունիզմի կառուցմանը, պիեսերի հիմնական կերպարները կոլխոզներում ազնիվ աշխատանքով ապրող մարդիկ էին, Նրանց կյանքն ու ձգտումները, իսկ երկրորդ համաշխարհային պատերազմի Նախօրյակին գերակշռում էին հայրենասիրական թեմաներով գրված պիեսները:

Վստահ ենք, որ դազախական դրամատուրգիային վերաբերող հարցերի հետագա բազմակողմանի քննությունը ևս մեկ ճանապարհ է՝ հասկանալու դազախ գրականության զարգացման օրինաչափությունները, վեր հանելու դրա առանձնահատկություններն ու յուրօրինակությունները: Նմանատիպ ուսումնասիրությունները

<sup>518</sup> Նույն տեղում, էջ 30:

<sup>519</sup> Նույն տեղում:

## **MUKHTAR AUEZOV AND KAZAKH DRAMATURGY IN THE 1920-1940S**

**SHUSHAN KHACHATRYAN**

*PAA RA, Chair of Political Governance and Public Policy, lecturer,  
Faculty of Oriental Studies, YSU, Post-Graduate Student (2013-2017),  
Yerevan, Republic of Armenia*

In the article we have touched upon the main features of the development of Kazakh dramaturgy which have not been studied in the Armenian reality yet. In particular, the task of the article is to study and analyze the existing preconditions for the development of dramaturgy, as well as to examine and present its main thematic features of the 1920-1940s. The aim of the article is to present the state of dramaturgy in the 1920-1940s and to show the role and significance of Mukhtar Auezov in its development. Therefore, in the article the story of the creation of Mukhtar Auezov's "Yenlik and Kebek" play was particularly studied considering the fact that it is the first play of the Kazakh dramaturgy. Works of both Soviet and modern Kazakh and Russian specialists were used in the article. The work has been carried out using the historical-comparative method widely used in literature study.

As a result of the research, we can conclude that M. Auezov, who is standing at the roots of Kazakh dramaturgy, was one of the most influential writers of this genre of literature. He not only wrote thirty plays, but also discussed theoretical issues, presented his vision for the further development of dramaturgy thus predetermining the further path of the latter.

We are sure that the further study of the works of M. Auezov as a writer and literary critic can have a special place in the field of Kazakh studies.

**Keywords:** *literature, Kazakh, Kazakh literature, dramaturgy, Kazakh dramaturgy, Mukhtar Auezov, literature study, study of theoretical issues, Armenian-Kazakh literary relations.*

## **МУХТАР АУЭЗОВ И КАЗАХСКАЯ ДРАМАТУРГИЯ В 1920-40-ЫХ ГОДАХ**

**ШУШАН ХАЧАТРЯН**

*преподаватель кафедры политического управления и  
публичной политики Академии государственного управления РА,  
аспирант (2013-2017) факультета востоковедения  
Ереванского государственного университета,  
г. Ереван, Республика Армения*

Эта статья – первый опыт изучения основных особенностей становления и развития казахской драматургии на армянском языке. В частности, в работе ставится задача изучить и проанализировать предпосылки становления казахской драматургии, а также рассмотреть и показать ее тематические особенности в период с 1920 по 1940 годы. Цель работы – продемонстрировать состояние драматургии в данный период времени, а также определить

роль Мухтара Ауэзова в ее развитии. Исходя из этого, была отдельно рассмотрена история создания пьесы «Енлик-Кебек» М. Ауэзова, так как она считается первой пьесой в казахской литературе. В статье использовались научные труды как советских, так и современных казахских и российских исследователей. В ходе исследовательской работы был применен историко-сравнительный метод. В результате был сделан вывод, что М. Ауэзов, стоявший у истоков казахской драматургии, был одним из самых выдающихся писателей этого жанра. Он – автор более 30 пьес, кроме того, он также занимался исследованием теоретических вопросов развития драматургии. Мы уверены, что проведение дальнейшего изучения его работ станет еще одним скромным вкладом в развитие армянского казаховедения.

**Ключевые слова:** *литература, казахский, казахская литература, драматургия, казахская драматургия, Мухтар Ауэзов, литературоведение, исследование теоретических вопросов, армяно-казахские литературные связи.*